

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՏՈՐԻԻ ՊԵՍԱԼՈՑՅԻՆ ՀԱՅ ԳՐԱԿԱ- ՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Նորա «Լինհարդ եւ Գերտրուդ» գրքի նայերէն թարգմանութեան առիթով):

„Ich will Schulmeister werden“ ՊԵՍԱԼՈՑՅԻ

ՅՈՎՀ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ

Մեր հալոց մանկավարժական գրականութիւնը զուրկ է մանկավար-
ժական աշխատութիւններէց, դասական գրածքների թարգմանութիւննե-
րից: Մենք դոցա մասին չենք էլ մտածել, ալ աշխատել ենք կցկտուր
տեղեկութիւններ տալ կրթութեան մասին: Աւսօր իմ առաջն է գրած
Պետաւոցցու հարուստ գրականութեան առաջին նմուշը: Նախ քան ալ
գրքի մասին գրելս, ասենք մի քանի խօսք Պետաւոցցի մասին: Յովհան-
նէս Հալերիի Պետաւոցցին ծնւել է լուսնարի 12 թ. 1746-ին Յինրիխ
քաղաքում: Վեց տարեկան հասակում կորցրեց նա իւր հօրը, որ բժիշկ էր
և կրթւեց շատ սահմանափակ շրջանում՝ իւր բարեպաշտ մօր և հաւատա-
րիմ աղախին Բաբելի միջոցաւ: Մօր բարեպաշտութիւնը մեծ ազդեցու-
թիւն ունեցաւ փոքրիկ Հալերիի վերաւ: Բայց աւելի մեծ կրթական
նշանակութիւն ունեցաւ նորա պապը, որը գիւղական քահանայ էր և միև-
նոյն ժամանակ շատ ջանք էր գնում աղքատների խնամութեան և կրթու-
թեան վերաւ: Փոքրիկ Հալերիի բիշ չէր ալցելում իւր պապին, ամենա-
քիչը տարաւ մէջ մի երկու ամիս նորա մօտն էր գտնւում և նորանից շատ
բան լսում ու սովորում: Հալերիի չէր կարողանում մոռանալ գործարան-
ների բանուր երեխաներին, որոնց տեսել էր պապի գիւղում: Ուսումնա-
բանում ոգևորում էին նորան Բողմեր և Բրալգինդեր ուսուցիչները հին
հերոսների համար: Ռուսոյի Էմիլը նորա պաշտած գիրքն էր, բայց նորա
մէջ վառւել էր կամք, միալն խեղճերին և աղքատներն օգնել, ինչպէս և

անում էր նորա պապը, ուստի և ալդ պատճառով սկսեց ուսումնասիրել աստուածաբանութիւնը. Նորա առաջին քարոզը եկեղեցում շատ անկաջող անցաւ. նա կակազում էր և տեղ տեղ իւր մտքերի կապը կտրում էր: Պետալոցցու առաջին փորձի անկաջողութիւնը ստիպեց նորան թողնել աստուածաբանութիւնը և սովորել իրաւաբանութիւնը: Նա մտածում էր, որ ալդ վերջինով աւելի լաւ կարող է պաշտպանել ճշշած ժողովրդի իրաւունքները: Սակայն անկաջող փորձերն և իւր մի ընկերով մեռնելուց առաջ արտասանած խօսքերն համոզեցրին նորան, որ հարկաւոր է փորձ և որ փորձած անձնաւորութիւնը միայն կարող է ալդ ընտրած ասպարէզում գործել: Պետալոցցին հիւանդացաւ և նրան խորհուրդ տւին ընդհատել ուսումնը, դնալ մի զիւղ, ուր և իրան նւիրեց հողագործութեան: Նա 1768-ին ձեռք բերեց Յիւրիխի վաճառականական տան միջոցով մի անմշակ հող Արգոյում և շինելուց միտուն: 1769 ին պսակեց ցիւրիխեցի մի հարուստ վաճառականի աղջկալ հետ Աննա Շալթհեղ անունով: Նա թէև ալստեղ հողագործութեամբ էր պարապում, սակայն վճռեց նաև բանալ մի վարժանոց աղքատ երեխաների համար, և շուտով հաւաքեց 50 փաշրիկ երեխաներ: Ամառը պարապում էր իւր աշակերտներով հողագործութեամբ, իսկ ձմեռը դաս էր տալիս, սովորեցնում, կրթում էր նոցա: Բայց շուտով նա պէտք է անբախտանար: Կնօջ կարողութիւնը զոհելով ուսումնարանի համար, 1780-ին փակեց դպրոցը և նա ստիպւած էր թողնել իւր կալածքը: Պետալոցցիի բարեկամները համարում էին նորան արդէն կորած մի մարդ և լիրաւի, 18 տարի ապրեց նա շատ նեղութիւններով մէջ:

Թողնելով հողագործութիւնը, նա նւիրեց գրականութեան: 1780-ին լուս տեսաւ նորա առաջին երկասիրութիւնը «Abendstunde eines Einsiedlers» (Միականցի իրիկնաժամը): Շատերն ալս աշխատասիրութիւնը շատախօսութիւն անւանեցին, ուստի Պետալոցցին մտածեց իւր մտքերն որոշ ձևակերպութեան ենթարկել և հրատարակեց 1781-ին մի ուրիշ աշխատութիւն «Այնհարգ և Գերտրուդ, մի զիրք ժողովրդի համար» վերնագրով: Ալդ զրքի մէջ ցոյց տւեց նա իւր տաղանդը և ժողովրդի մէջ մեծ հրշակ ստացաւ: Ալդ աշխատութեան լաջողութիւնը ոգևորելով նորան, նահեղինակեց մի ալլ զիրք «Գրիստոֆը և Էլզան»: Պետալոցցու նպատակն էր, որ ալս զրքովը լինի դասագիրք մարդկութեան ընդհանուր բնական դպրոցի, ան է՝ բնական դպրոցի: Սակայն ալդ նպատակին չը կարողացաւ ծառայել զիրքը, ըստ որում զրքի երկար ճառերը շատ ձանձրացուցիչ են, թէև մէջը մեծ մտքեր ևն արտալալտած: Նոյն տարին դուրս եկան «Զւիցերական խերթ» չաբաթաթերթի մէջ մի լօղւած «Die Figuren zu meinem ABC-Buche», մի չարք առական և մի լօղւած «Հետաքոտութիւններ բնութեան ընթացքի մասին մարդկալին սեռի դարգացման մէջ»: Ալս աշխատութեան մէջ դանդաւանում է երեք ստորոգութիւններ մարդկալին դրութեան, որոնք են՝ «մարդուս բնական, ընկերական և բարոյական դրութիւնները»:

Տասն և ութ տարի հազար մի նեղութիւններ կրելուց լստող, լսող-
փոխութիւնը ձգեց նորան կրկին հասարակական գործունէութեան մէջ:
Պետտալոցցին 52 տարեկան էր և ցանկանում էին տալ նրան տեսչի պաշ-
տօն Արգաուի սեմինարիալում: Սակայն այդ չը կատարեց. 1798-ին, երբ
կանտոնը, Ունտերվալդէն ֆրանտիացիք ակեցին ու անապատ դարձրին,
բազմաթիւ որբ երեխաներ թափառում էին այս ու այնտեղ, քաղցը չա-
գեցնելու համար, կառավարութիւնը ստիպած էր մտածել զորա մասին,
ուղարկեց Հալնրիխ Զոկկէին և Պետտալոցցուն, Նոքա հաւաքեցին 80 երե-
խաներ և զոցա ապրուստն ու կրթութիւնը շատ դժւարին բան էր, նա-
մանաւանդ նիւթական սուղ միջոցներում: Այստեղ ևս նորա գործու-
նէութիւնը երկար չը տևեց, ըստ որում այն սենեակները, ուր երե-
խաներն էին կրթւում, պէտք է զինւորական հիւանդանոցի փոխադրէր.
ուստի և ստիպւած էր իւր սիրելի որբերին արտասուքը աչքերին, ճանա-
պարհ ցոյց տալ: Իսկ ինքը Պետտալոցցին գնաց ակարութեան պատճառով,
հանքային ջրերով լաւտնի մի քաղաք: Երկար այս ու այն կողմը թափառե-
լուց լստող նա հրատարակեց 1801-ին իւր հաւաքքները զաստուութեան և
զպրոցական գործի վերաբերեալ «Ինչպէս է Դերտրուզը սովորեցնում իւր
երեխաներին» վերնագրով մի գրքում, և ընտրեց իւր գործունէութեան համար
Իֆերտոնը (Yverdon): Այստեղ ստացաւ նա «ժողովրդական մար-
գարէ» կոչումն, նորան ացելում էին մինչև անգամ օտար երկիրներէից
թաղաւորներ, գիտնականներ, գրողներ, ի միջի ալոց և փիլիսոփայ Հեր-
բարտն, աշխարհագէտ Ռիտտէր, Շտերն, Ռոլման, Դելբրիկ, Յիլլեր, Շտալ-
ներ և Պլամանը: Այս վերջինը որ ացելեց նորան 1804 թ., հետեւալ կեր-
պով է նկարագրում Պետտալոցցուն. «Նա կատարելապէս բնութեան մարդ է,
միջակ հասակի և հագուստի մէջ շատ անհոգ և կեղտոտ: Ի՛նչմբն է չեչոտ և
լարաբերութեան մէջ շատ բարի է, և երեխայի պէս շողոքորթող բնաւ-
րութիւն ունի. հոգով անհանգիստ է, ոչ մի տեղ զադար չունի, ուստի և
մի երկար խօսակցութիւն անկարող է համբերութեամբ լսել. սակայն ամ-
բողջ օրեր զիտէ նստել իւր գրասենեակում և թելադրել ինչպէս մոքերը
գալիս են. ապա լստող այդ թելադրածը կարդում ու սրբագրում էր այնքան,
մինչև որ ինքը գոհ կը մնալ: 1809-ին իւր վարժանոցի ուսուցիչները
թիւր 15 էր և աշակերտներինը 165: Այստեղ ևս վիճակւած չէր նորան մինչև
մահ գործել, նախ որ ծագել էին խռովութիւններ ուսուցիչների մէջ, ապա
1814-ին վախճանեց Պետտալոցց ու հաւատարիմ կիներ: Խեղճ ծերունին արտա-
սանեց իւր կնոջ դագաղի վերայ՝ «Մենք բոլորից վաճառւած և ծաղրւած էինք,
հիւանդութիւնը և աղքատութիւնը մեր զլուխը կռացրել էր և մենք կերել
ենք մեր չոր հացը արտասուքը մեր աչքերին, բայց ինչ բան տւեց մեզ
այն ուժն, զիմանալ կեանքի բոլոր հարւածներին»: Ահաւասիկ այս աղբիւ-
րից էինք ստանում ուժ, սիրտ առնում, հաւատում իրար և միմեարում,
մատնացուց անելով միևնույն ժամանակ իւր ձեռքին բռնած Աւետարանը:

Պետաւոլոցցին արդէն թուլացել էր, նա չէր կարողանում հաշուել այն գաղափարի հետ, թէ իւր սիրելի Գերտրուդը վախճանւել է։ Պետաւոլոցցիի դպրոցի ուսուցիչներէց մէկը 1818-ին հրատարակեց Նորա բոլոր գրւածներն, որից զուտ արդիւնք ստացւեց 50.000 գուլգէն։ Պետաւոլոցցին այդ փողով որոշեց մի որբանոց հիմնել Տլինդրոմ։ Իւր ծերութեան հասակում նա գրեց նաև մի երկասիրութիւն «Իմ կեանքի վիճակը» վերնագրով, որի մէջ նա խօսում է գլխաւորապէս իւր դպրոցի մասին։ 1827-ի սկզբներին Պետաւոլոցցին սաստիկ հիւանդացաւ։ Այդ հիւանդութիւնը տևեց գրեթէ մի ամիս և 17-ին փետրուարի 1827 թ. վախճանւեց։ Նորա գերեզմանաքարի վերայ փորագրւած են հետևեալ խօսքերը. «Ամեն ինչ ուրիշների համար, իսկ իւր համար ոչինչ»։

Պետաւոլոցցին իւր ամբողջ կեանքը ծառայեցրեց մի գաղափարի, այն է՝ ժողովրդի կրթութեան։ Նա ներկայանում է որպէս հայր խեղճ և կրթութեան կարօտ ամբողի։ Նա համոզւած էր, որ իւրաքանչիւր անհատ, լինի նա աղքատ, ու ստոր դասակարգից և անընդունակ, պէտք է կրթւի, որ մարդկութեան պիտանի անդամ դառնալ։ Նա ապացուցեց որ տարրական դասաւանդութիւնը, բոլոր դասաւանդութիւնների հիմնաքարն է։ Նա պահանջում էր զարգացումն մարդկային բոլոր ոլթերի, նա դտաւ որ մարդկային ընդհանուր կրթութիւնը հիմքն է բոլոր մասնագիտական զարգացման, Ամեն դասաւանդութեան սկիզբն էր Նորա համար՝ դիտողութիւնը։ Նա ոչ թէ միայն ստեղծեց Գերմանիայում մի Նոր ձև դասաւանդութեան, այլ Նորա գլխաւոր ծառայութիւնը այն է, որ նա ցոյց տւեց թէ ժողովրդի կրթութիւնը և ուսումը ազդաւին պէտք է լինի Պետաւոլոցցին մանկավարժութեան պատմութեան մէջ նոյն տեսակ աստղն է, ինչպէս Կոմենիուս, Խուսսօ, Հերբարտ։

Դառնանք «Լինհարդ և Գերտրուդին»։ Այս աշխատութիւնը Պետաւոլոցցու ամենատաղանդաւոր գործն է։ Նա ուզում է ալստեղ ցոյց տալ, որ մալքերից և Նոցա կրթութիւնից կախումն ունի մի ընտանիքի, հասարակութեան և պետութեան բարեկարգ վիճակի մէջ դտնելը։ «Նա կամենում եմ ժողովրդի կրթութիւնը լանձնել մալքերին», այս է այն գաղափարը, որով ամբողջ երկասիրութիւնը ներշնչւած է։ Պետաւոլոցցին ներկայացնում է Գերտրուդին, որպէս մի իղէալ, որը դարձնում է տունը Աստուծոյ տաճար, մանուկների սիրտը ու գլուխը կենդանացնում է իղէալական կրթութեան հողը։ Չը նալկով որ ալս դիրքը արծարծում է ալսպիսի բարձր գաղափարներ, նա ճշմարիտ ժողովրդական գիրք է։ Նա նկարագրում է ժողովուրդը, թէ ինչպէս է նա ապրում և սննդւում։ Մենք գրքի մէջ տեսնում ենք մի հասակաւոր կալւածատէրի, որին գիւղացիք հարկ են վճարում։ Գիւղի չրջակալքում ծաղկում է աւաղտկութիւնը։ Աւ Բոնալ գիւղի տանուտէր

Համայնքը, որը մինչոչ ժամանակ պանդոկապետ է և իւր տիրօջ հաւատն է վայելում, բոլոր թշուառութիւնների արմատն է։ Այդ մարդը, որ մեծ ուժ է կազմում, ոտնակոխ է անում գիւղի բնակիչների պատիւը, կլանում է նոցա կարողութիւնը. նա մի խօսքով գիւղը անբախտացնում է։ Այդ պատժութեան մէջ երևան են գալիս ուրիշ անձնաւորութիւններ, ինչպէս, օրինակի համար, որմնադիր Լինարդը, որ մի բարի մարդ է, սակայն ընկել է տաճարային ճանկերը և որին սա փողեր տալով ծառայեցնում է իւր նպատակներին։ Իսկ որմնադրի կին Գերտրուդը, նկատելով իւր մարդու ալդ վիճակը, դանգաւորում է կալածածասէր Արներին. ալդ վերջինը հրամայում է Լինարդին չինել գերեզմանատան պարիսպները։ Տանուտէր Արների խօսակցութիւնից հասկանում է, որ գիւղում մի նոր ոգի է երևում, ուստի վճռում է իւր ընկերների հետ պանդոկում ալդ ոգուն պատժել։ Բայց և ալդ խմբի խօսակցութիւնից պարզ երևում է, թէ ինչպէս նոքա իրար հետ ներքնապէս անհամաձայն են և իրար հաւատ չեն ընծայում։ Չ'երկարացնելու համար լալտեմ միայն աչն, որ վերադառնալ չարամիտները, կեղտոտութիւն չի մնում, որ չ'անեն. բայց վերջը ամենաչն ինչ բացւում է։ Վերջը Արները, գիւղական քահանան, բամբակ գոգ Մալբը և շատերը գալիս են աչն և զրակացութեան, որ մի բարի վերանորոգումն գիւղական հանգամանքների, կարող է միայն կրթութեամբ և դաստաւորութեամբ տեղի ունենալ։ Գլխաւորէն վճռում է՝ «ես ուզում եմ դպրոցի վարպետ լինել», և առնում է գիւղի ուսումնարանը իւր ձեռքը, որը մինչև ալդ ժամանակ պրեթէ աչքից ընկած էր։ Սակայն ալդ գործը իւր ձեռքն առնելով, մտնում է նա Գերտրուդի բնակարանը սովորելու նորանից՝ հաւատարիմ դաստիարակչուհուց սովորելու։ Նա տեսնում է, ինչպէս Գերտրուդը առաւօտները երեխաների հետ Աւետարան է կարդում և ջերմեռանդ աղօթում, ինչպէս ամբողջ օր խօսակցութիւնը ալդ երեխաների հետ՝ կարգացածի գլխաւոր մտքերն են. նա տեսնում է, թէ ինչպէս երեխաները մօր առաջնորդութեամբ ալգում գործում են։ «Որք պարոնները Գերտրուդից հեռացան, ասացին նորան, որ վաղն էլ կը գանք»։ Նա պատասխանում է նոցա. «ինչո՞ւ համար»։ Դուք վաղը և միշտ էլ նույն կը տեսնէք, ինչ որ ալժմու։ Գլխաւորէն պատասխանում է՝ «Այն ինչ որ միշտ նույն է, նա տեղական է և չաւիտենական, իսկ ինչ փոփոխւում է՝ նա անցողական է, ամուր չէ։ Ալդ դէպքից լետոյ է Գլխաւորէնը իրան նւիրում է դպրոցին, կրթութեան պտուղը հասունանում է և ամբողջ գիւղը բարեփոխւում է։ Իշխանն ևս լսում է աչս բարի գործի մասին և գովում է նոցա ջանքը՝ բարելաւացնելու ժողովրդի դիւսաւորապէս խեղճ, աղքատ և որբերի վիճակը։

Ահաւասիկ աչս է «Լինհարդ և Գերտրուդի» բովանդակութիւնը։ Սորա հիմնական գաղափարն է՝ իւրաքանչիւր ժողովրդի բարելաւութիւնը, նորա լսու վիճակը միայն կախումն ունի կրթութիւնից։ Այս աշխատութիւնը թէև կարեւոր է դնել Ռուսօի «Էմիլի» չարքում, բայց չի կարող ալդ վերջինին

հաւասարել, ըստ որում վերջինս ամփոփում է հնդկական ամբողջ մանկավարժական ծրագիրը, մինչդեռ աւստեղ միայն մի մեծ գաղափարի իրագործման մասին է խօսքը: Այս գրքի նշանակութիւնը այնու ամենայնիւ մեծ է և լեզուափոխական ազդեցութիւն ունի և ամբողջ գերմանական ազդը շնորհակալ է Պետտալոցցուն այդ աշխատութեան համար:

Դառնանք այժմ մեր հակական թարգմանութեան, թէ որ աստիճան կարևոր է հայերիս համար «Լինհարդ և Գերտուդ», աւելորդ է բացատրել, նա պէտք է նաև մեր ժողովրդի ընթերցանութեան դիրք լինի: Խօսքներս մասնաւորեմք, սակայն, միայն այժմեան թարգմանութիւնով, որ հրատարակել է Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակող ընկերութիւնը: Յաւօք սրտի պէտք է ես լալտեմ, որ ընկերութեան հրատարակածը չի կարող ալն պահանջները գոհացնել, որ իսկականին է վիճակած: Սորա գլխաւոր պակասութիւնն է համառօտութիւնը. Պետտալոցցու «Լինհարդ և Գերտուդը հարց ու փորձական ձևով է գրած և տեղ տեղ ներկայացնում է հրաշալի դիալոգներ, իսկ ռուսերէնի կրճատումն պատմողական, բաց և անհամ մի գիրք է: Պետտալոցցու գրածքի արժանաւորութիւններից մէկն էլ նորա ճոխ ոճն է, իսկ թարգմանութեան մէջ բացակայ է այդ վերջինը, թող ամեն ընթերցող ինքը դատէ, արդեօք մի տաղանդի գործ կարելի կրճատել, և կը լինի նա նոյնպէս մի ստեղծագործութիւն: Ոչ, նա կը նմանի մի թխած շարագրութեան, Գուցէ ընթերցողն այս գիրքը չի ճանաչէ. առենք ուրիշ օրինակներ. եթէ կրճատեմք Սոֆոկլէսի, Շեկսպիրի, Շիլլերի, Գէթէի, Դիկկենսի, Շպիլհագէնի, Ֆէլէրբախի Ալֆոնս Դոդէի, Զախար-Մագոնի, Պուշկինի, Տուրգենևի, Դոստոյեւսկու և այլ գրողների երկիրը, արդեօք նոյնը կունենալինք, թէ աւելի վատը: Ինչ կարող էր լինել եթէ մենք Դոստոյեւսկու «Преступление и наказание» ըստ մեր կամեցածի համառօտէինք, ի՞նչ լինէր մի անհամ գրածք, որի ընթերցանութիւնը ինքը ցոյց կը տար, որ այս գործը չինձու է և չէ արդիւնք տաղանդի: Այս տեսակէտից նալած, ներկայ թարգմանութիւնը մի նպաստ չէ մեր դրականութեան, և ես կ'առաջարկէի, որ մի բարի մարդ լանձն առնէր կատարեալ թարգմանելու այս հրաշալի երկը, որ միջազգային ժողովրդական մի գիրք է: Միւս կողմից պէտք է նկատել որ այժմեալ թարգմանութեան լեզուն ևս աղաւաղած է, սահուն և կոկ չէ:

Աչքի առաջ ունենալով ալն հանգամանքը, որ վերոյիշեալ թարգմանութիւնը հալոց հրատարակչական ընկերութեան հրատարակութիւնն է, ուստի թող կը տալի ինձ առաջարկել այդ ընկերութեան ուշադրութեանը մի քանի ուրիշ հրաշալի գերմանական և ուրիշ ազգերի մանկավարժական գրքեր, որ արժանի են թարգմանելու:

1 Մարական դպրոց, գործ Յովհաննէս Ամուս Կոմենիոսի:

2 Ինչպէս Գերարդուդը սովորեցնում է իւր երեխաներին, գործ Հալնրիխ Պեստալցցու:

3 Էմիլ, գործ Ռուսսակի:

4 Զրուցներ երեխաների և նոցա բարեկամների համար գ. Ջալցմանի:

5 Krebsbüchlein oder Anweisung zu einer vernünftigen Erziehung der Kinder, նոյն հեղ.:

„Faciam, mi popule, si te idem facientem prius wieder.“

(Ես կ'անեմ, հալրիկս, եթէ առաջուց տեսնեմ, որ դու էլ նոյնը անում ես):

6 Karl von Karlsberg oder das menschliche Elend, նոյն հեղ.:

7 Konrad Kiefer, oder Anweisung zueiner vernünftigen Erziehung der Kinder. նոյն հեղ.:

8 Ameisenbüchlein, նոյն հեղ.:

9 Die deutsche Jugenderziehung 1891 գործ Գուսֆելդի: